

ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՆԵՐ

ՎԱՐՊԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ (Բուենոս Այրես)

Հակառակ իր աղբյուրագիտական մեծ կարևորության, դրոշագիտությունը (և անոր կից՝ գինանշանագիտությունը) պատշաճ ուշադրության չէ արժանացած: Հ. Վարդան Հացունիի հիմնարար աշխատության կողքին¹ կը գտնենք նյութին հետ առնչվող քանի մը հոդվածներ, ինչպես և տարբեր բնույթի ուսումնասիրությանց մեջ ցրված պատահական տեղեկություններ: Նյութին վիճակը, մասամբ, փաստաթուղթերու սակավության հետևանք է, պարագա մը, որ կը դժվարացնէ ստույգ եզրահանգումներու արդյունավորումը և դուռ կը բանա բազմազան վարկածներու:

Հոս պիտի փորձենք տեղեկություններ համադրել և առաջ քաշել փաստարկումներ հին հայկական կարգ մը դրոշակներու կապակցությամբ:

Հայտնի երևույթ է, որ դրոշակներու հնագույն տարբերակը պետք է նկատել ուղղահայաց ծողերու ծալրը՝ գետեղված քանդակը, որ կը խորհրդանշեր տվյալ աստվածություն մը: Այս քանդակներեն բազմաթիվ նմուշներ հայտնաբերված են Մերձավոր Արևելքի տարբեր հնավայրերու մեջ (Ալաճա-Հուլուք, Մարի, Ուկարիթ, Լճաշեն)²:

Հին կտակարանի հատվածը Մովսես մարգարեի ձեռքը եղած «Եհովայի զավազանի» մասին, որ կոփվի ատեն բարձր պահելով հաղթություն կը պարգևեր իսրայելացիներուն, մեզի կը ներկայացնէ հին դրոշակի մը անուղղակի վկայությունը:

Եթե սկզբնապես այս դրոշները³ կենդանակերպ էին (եղջերուներ)⁴, սակայն Զ. Ա. 13—12-րդ դարերուն Հայաստանի մեջ արդեն կը հանդիպինք մարդակերպ արձանադրոշներու, որոնց հետաքրքրական օրինակները վերջին տարիներուն պեղված են Լոռի բերդի և Զիրակավանի դամբարաններեն⁵:

Հայկական դրոշներու հաջորդ փուլը կը վերաբերի ասորեստանյան աղբյուրներու Ուրարտու (Արարատ, Վանի թագավորություն) պետության, որ Հայկական Լեռնաշխարհի առաջին միասնական պետական կազմավորումն էր: Արձանագրական վկայություններու, թե հնագիտական պեղումներու չգոյությունը մեզի կ'արգիլեն որևէ ենթադրություն ընել Արմանի կամ Հայասա երկիրներու դրոշակներուն մասին. այդ երկիրները Զ. Ա. 3—2-րդ հազարամյակներուն տարածված են Հայկական Բարձրավանդակի որոշակի շրջաններու վրա:

Ուրարտուի աստվածապետական կարգին համաձայն, թագավորը գերագույն աստվածության՝ Նալդիի ներկայացուցիչն էր երկրի վրա: Ան կը վարեր պետության բոլոր գործերը Նալդիի ցուցմունքներուն համաձայն և անոր շնորհքին իբրև արդյունք: Նալդին վճռական մասնակցություն ուներ պետական կարգուսարքի բոլոր արտահայտություններուն մեջ, սովերի

¹ Հ. Վարդան Հացունի, Հայ դրոշներ, Վենետիկ, 1919, (Բ. տպ., 1933):

² Տե՛ս Ս. Պետրյան, Եղջերուի պաշտամունքի հետքերը Հին Հայաստանում, Պատմա-բանասիրական հանդես, № 2, 1982, էջ 143—145:

³ «Դրոշ» բառի նախնական իմաստը կապված է կոապաշտներու արձաններուն հետ. տե՛ս Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Եր., 1979, էջ 645:

⁴ Զանգեզուրի մեջ վերջերս հայտնաբերված են բրոնզե կենդանակերպ արձանիկներ, որոնք կը թվագրվին Զ. Ա. 2-րդ հազարամյակի վերջ 1-ին հազարամյակի առաջին քառորդ: Անոնցմե երկուքը՝ գտնված Անգեղակոթ և Վաղուդի, որոնք դիտված են իբր ծիսական իրեր, «փորատակներին փոքրիկ գլանիկներ ունեն, որոնց մեջ զավազանի փայտե մասն է ամրացվել» (Օ. Նսկիկյան, Զանգեզուրում հայտնաբերված ծիսական իրեր, Պատմա-բանասիրական հանդես, № 1, 1988, էջ 232): Հավանաբար ասոնք ևս արձանադրոշներ ըլլան:

⁵ Տե՛ս Ս. Պետրյան, Լոռի բերդի քրմի դամբարանը, Պատմա-բանասիրական հանդես, № 3, 1986, էջ 110—114:

մեջ ձգելով և կամ իր ետփյան հետ համաձուլելով դիցարանի մյուս անդամները: Այս երևույթը իրավամբ որակված է «խաղաճություն»⁶:

Գերագույն աստված Ռալդին հսկայական նշանակություն ուներ ռազմական գետնի վրա: Ան կ'առաջնորդեր բանակը և զինվորական ամեն գործողություն իր անունով կը կատարվեր: Թագավորական կառավարատիպ արձանագրությունները բոլոր պարագաներուն այսպես կը նկարագրեն պատերազմական գործերը. «Ռալդեն արշավեց, սեփական զենքին (') ենթարկեց Ջադիաու (") արքային (և) Պուլուադեյե լեռնային երկիրը: Ռալդեն զորեղ (է), Ռալդյան զենքն՝ իմ զորեղ (է): Արշավեց Սարդուրե Արգիշթորդին: Սարդուրեն ասում է.— Գրավեցի քսանմեկ ամրոց, քառասունհինգ քաղաք մեկ օրում նվաճեցի, Լիբլիունե քաղաքն արքայական, (որ) ամրացված (էր), կռվում գրավեցի: Սարդուրեն արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Շուրեյե (երկրի), արքա Բիտինեյե (երկրի), իշխանը Տուզպա քաղաքի»⁶:

Այս և նմանօրինակ բոլոր արձանագրությունները ունին հետևյալ կառուցը. ա) Ռալդին կ'արշավե և իր ռազմական ուժին կ'ենթարկե տվյալ երկիրը, բ) Ռալդիի ուժը գովասանքի կ'արժանանա, գ) ապա թագավորական արշավանքի բուն նկարագրությունը կու գա, որ մասնաճանաչություն է այդ երկրի մեջ կատարված սխրագործություններուն:

Սույն կառուցաչափ վերլուծումը ցույց կու տա, որ Ռալդին և բանակը կը միաձուլվին, Ռալդիի ուժը՝ բանակին մեջ մարմնավորված, նվաճումը կը կատարե: Բայց «Ռալդի» գաղափարը զուտ վերացական չէ: Ընդհակառակը, Ռալդի անձնապես կը նվաճե երկիրը: Ռալդիի քանդակը կ'առաջնորդե բանակը և աստիճանաբար այդ առաջնորդող պատկերը կը զգենու երկրի խորհրդանիշի՝ դրոշակի նկարագիրը: Եվ, բնականաբար, Ռալդիով «լեցված» երկրի մը մեջ անոր պատկերը պետք է դրոշակ դառնար:

Նետաքրքրական է, որ այսօրինակ բանաձևային նախադասութենե մը անկախաբար, արդի պատմաբաններ երբեմն պատկերավոր ոճին կը դիմեն՝ երկրի մը դրոշմը կամ զինանշանը փոխաբերական անունով երկրի անունին տեղ գործածելով: Օրինակ, Թեոտոր Մալնայս, խոսելով Լուկուլուսի վիճակի մասին Արածանիի ծակատամարտեն ետք, կը գրե. «Յոթ տարվան կենաց-մահու պատերազմն ետք՝ Նորեն սկիզբն էինք երկանց. Լուկուլուսի մեծ հաղթանակները երազի նման կը շոգիանային: Հոռմեական արժիվները, իրենց հառաջխաղացքի համահավասար արագությանը, կը վերադառնային Եփրատեն Տավրոս և Տավրոսեն Ալիս»⁹ (ընդգծումը մերն է—Վ. Ս.):

Անշուշտ, այս համեմատության մեջ պետք չէ փնտրել գեղարվեստական մտածողության մը գոյությունը Ուրարտուի արձանագրություններուն մեջ, որ բացակա է ըստ ամենայնի: Գերմանացի պատմաբանին պատկերավոր ասույթը, պարզապես, համազոր է Ռալդիի «դրոշակային» գործառույթին:

Կարելի է ենթադրել, որ Ռալդիի վերացական հղացքին այդ առարկայացման հոլովույթը ավարտած էր, երբ Ուրարտուն տակավին ամփոփված էր իր նախնական կորիզին շուրջ, ու ապա պարտադրված՝ Նորաստեղծ միասնական պետության:

Մեերի դուան արձանագրությունը, որ կը ներկայացնե Ուրարտուի դիցարանի գրեթե լիակատար ցուցակը, կը պարունակե յուրաքանչյուր աստվածության կամ «սրբության» ի պատիվ սահմանված զոհաբերական կարգը: «Սրբություններ» ու երկրորդ խումբը հանդիսացող երեք հղացքները մեկ եզ և երկու ոչխար կը ստանային ամեն մեկը: Այդ հղացքներն էին¹⁰.

ա) Ծ Haldini iniriase, բ) Ծ Haldini alsuise, գ) Ծ Haldini diruse:

Երկրորդ հղացքը արդեն վաղուց կը թարգմանվի «խաղյան մեծություն»: Առաջին հղացքը տեղի տված է բազմաթիվ ենթադրություններու: Մ. Ծերեթելի, Ի. Դյակոնով, Մ. Իսրայելյան զայն կը թարգմանեն «աստվածայնություն, աստվածություն», Գ. Մելիքշիվիլի՝ «պատկեր, դեմք», Գ. Ղափանցյան՝ «աննականություն, քաջություն»¹¹: Ամենն հավանականը կը թվի ըլլալ «կրակ (աստվածային), գայլույթ» թարգմանությունը, զոր առաջարկած է Ը. Կարազյուզյան¹² և որուն հիմնավորումը տված է Զ. Մուղդուսյան¹³:

⁶ Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, Եր., 1940, էջ 114:

⁷ Ավելի համոզիչ է Գ. Ղափանցյանի «նետ», «նիզակ» թարգմանությունը, զոր կ'երկրորդն է Զ. Մուղդուսյան լրացուցիչ փաստարկներով. տե՛ս Զ. Մուղդուսյան, Մեերի դուան արձանագրության մի շարք հավակցությունների մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, № 1, 1988, էջ 73:

⁸ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Կ. Ա, Եր., 1981, էջ 70:

⁹ S.M. Ashot Artzruni, Historia del pveblo armenio, Bvenos Aires, 1971, p. 62.

¹⁰ N. Adontz, Histoire d'Armenie, Paris, 1946.

¹¹ Ս. Հախայկյան, Ուրարտական դիցարանի «սրբությունները», Պատմա-բանասիրական հանդես, № 2, 1981, էջ 206: Զ. Մուղդուսյան, նշվ. աշխ., էջ 74:

¹² Ը. Կարազյուզյան, Ուրարտական Նորահայտ գաղափարագրերը, Լրաբեր հասարակական գիտությունների, № 2, 1978, էջ 83:

¹³ Զ. Մուղդուսյան, նշվ. աշխ., էջ 74—75:

Երրորդ հղացքը Ռյակոնով կը թարգմանէ «ողորմածություն»¹⁴, Կարագլոյան՝ «կատարելություն»¹⁵, իսկ Մորդման՝ «դրոշ»¹⁶: Մորդմանի ստուգաբանությունը կ'ընդունի Ս. Հմայակյան, իբրև փաստարկ նշելով, թէ «խալոյան դրոշ» հղացքը «անպայման, ինչպէս բխում է Միեթի դոան արծանագրութեան բնույթից, պիտի հիշատակված լիներ այնտեղ, ստանալով զոհերի համապատասխան քանակ»¹⁷:

Թեև հետաքրքրական է *diruse* և *դրաւջ* (դրոշ) բառերու համեմատությունը, սակայն մերժելի է *diruse*-ի թարգմանությունը իբրև «դրոշ»: Նախ, որովհետև *դրաւջ* իր համապատասխան զուգահեռները ունի իրանական լեզուներուն մեջ (ալվ. *drafša*, պարթ. *drifš* [*drafš*], միջին պարսկ. *draifš*, պարսկ. *diraifš*, բոլորն ալ «դրոշ» նշանակությամբ)¹⁸ և պետք է համարվի իրանական փոխառություն¹⁹, Զ. Ա. 6-րդ դարէն ետք կատարված²⁰: Մյուս կողմէ, «սըրբություններու» խմբավորումը կատարված է նկարագրային համասեռութեան հիման վրա («միմյանց հետ պաշտամունքային ընդհանրություններ ունեցող հասկացություններ»)՝²¹: Եթէ *diruse* հասկնայինք «դրոշ» իմաստով, պիտի կորսվեր «խալոյան մեծութեան» և «խալոյան զայրույթին» հետ ենթադրելի միատեսակությունը, տեղի տալով վերացական ու թանձրացյալ (կոնկրետ) հղացքներու խառնուրդին, որ ալ սրբություններու խմբավորման մեջ չի նկատվիր և ըստ էության կը հակասէ այդ խմբավորման համակարգային զարգացումին:

Այս խմբավորումը բաղկացած է վերացական գաղափարներէ՝ «մեծությունը», «զայրույթը» և «ողորմածությունը», և իր բնութեամբ ուզմի աստվածութեան առաջնային գործառույթին («խալոյան զորքեր») տրամաբանական շարունակությունն է:

Երկու զորաբաժինները՝ հետևակազորը և հեծելազորը, իրենց ուրույն դրոշակները ունեին: Զ. Ա. 714-ին՝ դեպի Ուրարտու կատարած իր արշավանքի ընթացքին, Սարգոն Բ. կողոպտած է Մուսասիրի տաճարը, հսկայական ավար մը ձեռք բերելով, որուն կարգին պրոնզէ իրեր՝ 25122 «ծանր ու թեթև» վահան, 1514 «ծանր ու թեթև» նիզակ, 30412 «ծանր ու թեթև» սուր, 607 «ծանր ու թեթև» անոթ, առավել՝ պրոնզէ աղեղներ, կապարներ ու հեծելադրոշներ²²: Ինչ կը ներկայացնեն այդ դրոշակները: Երկու կարելիություններ կան.

ա) Թելշեբա և Շիվինի աստվածներու քանդակները: Կարմիր-բլուր գտնված Թելշեբայի արծանիկը ենթադրաբար կը ներկայացնէր դրոշ մը²³, մինչդեռ Միեթի արծանագրությունը կը խոսի «թելշեբայական զորքերու» մատուցվելիք զոհաբերություններու մասին²⁴: Սակայն, ո՛չ «շիվինյան զորքեր»²⁵ կան և ո՛չ ալ Շիվինին խորհրդանշող դրոշակ, ինչ որ խնդրական կը դարձնէ վերոբերյալ վարկածը:

Բ) Տրված ըլլալով ուրարտական դիցարանի համաձուլման ընթացքը Խալդիի կերպարին շուրջ, թեկնս զորամասային դրոշ ըլլային առյուծն ու արծիվը՝ Խալդիի նշանակները: Այս երկու արարածները կը խորհրդանշեն հաջորդաբար Խալդիի երկրային ու երկնային տիրույթները²⁶:

Եթէ ընդունելի նկատվի երկրորդ վարկածը, արդյոք կարելի՞ է կապ մը գտնել Արծրունյաց նախարարութեան տոհմական պաշտոնին հետ՝ թագավորի խորհրդանիշ արծիվներու կրումը²⁷: Պիտե՞լ տանք, որ Միեթի արծանագրութեան մեջ կը խոսվի նաև «Արծունիունիյան քաղաքի աստվածներու» մասին²⁸:

Այս բոլորէն դուրս Ս. Հմայակյան կը հաղորդէ, որ «այժմ հայտնի են ուրարտական բազ-

¹⁴ Ս. Հմայակյան, Նշվ. աշխ., էջ 206:

¹⁵ Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, Նշվ. աշխ., էջ 70:

¹⁶ Հ. Աճառյան, Հայերէն արմատական բառարան, հ. Ա., Եր., 1971, էջ 697:

Ս. Հմայակյան, Նշվ. աշխ., էջ 206:

¹⁸ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, հ. Ա, Եր., 1987, էջ 524:

¹⁹ Հ. Աճառյան, Նշվ. աշխ., էջ 697:

²⁰ Հայ-իրանական լեզվական փոխառնչութեան սկիզբը:

²¹ Ս. Հմայակյան, Նշվ. աշխ., էջ 210:

²² *S'ur* Fr. Thureau-Dangin, Une relation de la huitième campagne de Sangou, Paris, 1912, I. 312—314, Հայ ժողովրդի պատմություն, հ. Ա., Եր., 1971, էջ 377—378:

²³ Հմայակյան ուղղակի «դրոշ» կը կոչէ գայն (Նշվ. աշխ., էջ 207):

²⁴ Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, Նշվ. աշխ., էջ 45:

²⁵ Հմայակյան (Նշվ. աշխ., էջ 208) կը փորձէ գանոնք տեսնել արտու՝արասիներուն մեջ, սակայն իր ենթադրությունը անհամոզիչ է:

²⁶ Ս. Հմայակյան, Ուրարտական Խալդի և Արուբանէ աստվածությունների մասին, Պատմա-բանասիրական հանդես, № 2, 1982, էջ 129:

²⁷ Սովսե Ռոբէնացի, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 152:

²⁸ Հայ ժողովրդի պատմութեան քրեստոմատիա, Նշվ. աշխ., էջ 45:

մաթիվ դրոշների պատկերներ»²⁹։ Դժբախտաբար, ան մանրամասնություններ չի տար։ Մեր ձեռքի տակ եղած աղբյուրները ոչինչ կ'ըսեն մեզի այլ դրոշակներու մասին։

Զ. Ա. 590—585 թվականներուն Ուրարտուի թագավորական հարստությունը կ'իյնա։ Ինչպե՞ս տեղի ունեցած է այս քաղաքական ծանրակշիռ փոփոխությունը։ Սկզբնաղբյուրները այս հարցի մասին լռություն կը պահեն։ Արդյոք հայերը կը գրավեն ուրարտացիներու տե՛րը (մարերու կամ սկյութացիներու օգնությամբ), գուցե պալատական հեղաշրջո՞ւմ, որով իշխան մը գահընկեց կ'ընեն թագավորը։ Այս և այլ վարկածներու որդեգրումը կախում ունի ուսումնասիրողի պատկերացումեն՝ Ուրարտուի ցեղային (էթնիկ) պատկանելության մասին։ Հարցը չափազանց բարդ է, սակայն պահ սը պիտի շեղինք մեր բուն նյութեն, հաստատելու համար, որ հայ ժողովուրդի ծագման խնդիրները բնավ իրենց վերջնական լուծումը չեն գտած. ընդհակառակը, վերջին տարիներուն սկսած են երևան գալ հնագիտական, լեզվաբանական թե պատմագիտական նորանոր երևույթներ, որոնք մեր կարծիքով կրնան հեղաշրջական դեր խաղալ։ Նոր փաստարկներու լույսին տակ, Ուրարտուի «հակակախ» վարկածը այնքան ալ արհամարհելի չէ։

Ամեն պարագայի, կասկածե դուրս է, որ երկրի նոր տերերը, արյունակից ըլլալին թե ոչ, պիտի հաստատենին նոր դրոշակ մը, իրենց տոհմային պատկանելության կապով։ Այդ ժամանակ «հայրենիք» և «պետություն» գաղափարները տեղայնական բնույթ ունենին, և, աղիասարակ, արքայատոհմի փոփոխությունը երկրի գլուխը կ'ենթադրէր հեղաշրջում մը պետական կարգուսարքին մեջ (պաշտոնական լեզու, դիցարան, սովորություններ, ևն)։ Այս նոր ընթացքն չեն կրնար զեռծ մնալ դրոշակը (կամ զինանշանը. պետք չէ մոռնալ, որ դրոշակի և զինանշանի տարբերություն չկար փաստորեն, նախքան կերպասի որդեգրումին՝ որպէս դրոշակի ձևավորման նյութ)։

Բնական է, թագավորական նոր տունը չէր կրնար իբրև ժառանգ վերցնել իր նախորդներուն հաստատած կարգը ամբողջովին։ Սակայն, Հ. Ռաչատրյան, անտեսելով այս տրամաբանական հետևությունը, կը փորձե հավաստիացնել, որ Երվանդունիները (Երվանդյանները՝ ըստ Մովսէս Խորենացիի) Ուրարտուի զինանշանը ժառանգած են։ Ան կը գրե. «Սեզ հասած մի շարք քանդակներ ենթադրել են տալիս, որ Ուրարտուի զինանշանը եղել է երախը բաց յոթգլխանի վիշապը, որը խորհրդանշում էր Ուրարտուի յոթը Նահանգները։ Բայց ամենայն հավանականությամբ Ուրարտուի համար զինանշանի դեր են կատարել նաև Ռալո, Թեյշեբա և Ծիվինի աստվածների քանդակները։ Յոյգլխանի վիշապի նշանը, այնուամենայնիվ, ժառանգել են Երվանդունի հայ թագավորները»³⁰։

Ի՛նչ բնույթի քանդակներ Ռաչատրյանին ենթադրել կու տան յոթգլխանի վիշապի կիրարկումը որպէս ուրարտական զինանշան։ Այդպիսի վիշապներ մեզի հայտնի չեն։ Ուրարտուի պետական կրոնքը որևէ տեղ չի տար վիշապի պաշտամունքին, որ աստվածության մը խորհրդանիշ չէ եղած, գոնե առկա տվյալներով։

Սյուս կողմէ, Ուրարտուի յոթը Նահանգները մասնավոր դեր չեն խաղացած պետության մեջ. սեպագիր արձանագրությունները քաղաքական ներքին խմորումներու մասին չեն հիշատակել։ Թագավորներու ռազմական գործունեությունը ձգտած է միավորել Հայկական Լեռնաշխարհի տարբեր շրջանները քաղաքական մեկ դեկի տակ³¹, իսկ Կանա լճի շրջակայքը գտնվող Նահանգները՝ Ուրարտու նախնական կորիզը³², միաձուլլ կառուցի մը տպավորությունը կը թողուն։

Նկատի ունենալով կրոնա-դիցաբանական տարբեր համակարգերու խաղացած դերը հին ժողովուրդներու կյանքին մեջ, որունմեկ բնորոշ օրինակն է Ուրարտուն, ինչպէս վերը տեսանք, դժվար է ընդունիլ, որ դրոշակ-զինանշանը խարսխված ըլլար գուտ քաղաքական նշանակություն ունեցող խորհրդանիշի մի վրա, մասնավա՛նդ եթե նկատի ունենանք, որ Ուրարտուն ոչ մեկ ձևով դաշնակցային պետության մը պատկերը կը ներկայացնէր, որպէսզի նման զինանշանի մը գործածությունը արդարացի ըլլար։

Զգալով փակուղիի մը գոյությունը, Ռաչատրյան կը փորձե ելք մը գտնել, հայտնելով, թե «ամենայն հավանականությամբ... դեր են կատարել նաև Ռալո, Թեյշեբա և Ծիվինի աստվածների քանդակները»։ Այնուամենայնիվ, հակասական է իր կեցվածքը, քանի որ չի փորձեր վճռել՝ ո՞րն էր Ուրարտուի պետական զինանշանը։

²⁹ Հմայակյան, Նշվ. աշխ., էջ 207։

³⁰ Հայկ Ռաչատրյան, Հայկական գերբերը, Րաֆֆի տարեգիրք, հատոր Ա, Թեհրան, 1969, էջ 310։ (Հոդվածը արտատպված է «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթին, սակայն թրվականը հիշված չէ)։

³¹ Կ'ընդգծենք բառը, որովհետև չենք կարծեր, որ այս թագավորներու արշավանքները ուղղված ըլլալին օտար ցեղեր նվաճելու, այլ արյունակից ցեղեր միավորելու։

³² Այս տեսակետը վիճարկումի ենթարկված է վերջերս. տե՛ս Հայկական Խորհրդային Հանրագիտարանի «Ուրարտու» հոդվածը (հեղ. Մ. Կատվալյան)։

Հերքելով «յոթալիսանի վիշապի» օգտագործումը իբրև ուրարտական զինանշան, անկարելի կը դառնա իր փոխանցումը Երվանդունիներուն, թեև, ծիշտ է, բացառված չէ, որ այս վերջինները անկախ խողովակով որդեգրած ըլլան գալն, առանց «ժառանգելու»: Սակայն, ստորև պիտի տեսնենք, որ այդ չէ եղած իրենց դրոշակ-զինանշանը³³:

Առաջին հերթին մեր ուշադրությունը պիտի կեդրոնացնենք Գարեգին եպս. Սրվանձտյանցի հետևյալ հաղորդումին վրա, գոր արձանագրած է իր բանահյուսական շտեմարանին՝ «Գըրոց-բրոցին» մեջ. «Տարոնոս դաշտի բերանը, Աշտիշատա մոտ՝ կա մի գեղ, գոր այսօր Բաղշա կը կոչեն տեղացիք, բայց Տարոնոս պատմիչ Հովհաննես եպիսկոպոսը Վիշապն անուն կուտա այն տեղին, և քաղաք կը կոչե. ինչպես նաև Գալլ Վահանի ժամանակ Օձ քաղաք կը պատմե Տարոնոս դաշտի արևելյան հարավի կողմը, ուր շամբեր կան, Սեղրագետի ական քով: Օձ քաղաքի հետքերը, ավերակները, ինչպես նաև անունն ալ՝ կան ցայսօր, և քանի մը տուն ալ բնակիչ ունի մեջը իբրև գեղացի, Մուշեղշեն անունով գետին մոտ: Օձ և վիշապը երբեմն Հայկազն Երվանդյան Տիգրանի ժամանակ հայկական դրոշակի նշանն էր, Աժդահակը սպաննելուն հիշատակ³⁴» (ընդգծումը մերն է.—Վ. Մ.):

Ապա Սրվանձտյանց կը պատմե գանազան ժողովրդական հավատալիքներ օձերու և վիշապաներու մասին, որոնք կապ չունին իր բերած տեղեկության հետ:

Դժբախտաբար, բանահավաքը չի նշեր իր օգտագործած աղբյուրը, որով չենք կրնար լիակատար վստահությամբ ընունիլ դրոշակին վավերականությունը: Որքան մեզի հարևան է, ոչ մեկ պատմիչ խոսած է այդ մասին: Սակայն, քանի մը կովաններ թույլ կու տան պնդել դրոշակի հիմքերուն հարազատության վրա:

Նորենացի կը մեջբերե Տիգրան Երվանդյանի հակառակորդին՝ Աժդահակի երազը. «Ով սիրելիք, ատում է նա, (երագումս թվում էր), թե ես մի անձանոք երկրում եմ գտնվում, մի լեռան մոտ, որ երկրի վրա երկար բարձրացած էր և որը Հայկազանց երկրումն էր: Եվ երբ ես երկար նայում էի այդ լեռան, մի ծիրանագգետտ կին երևաց ինձ երկնագույն քողով, բարձր լեռան գագաթին նստած, խոշոր աչքերով, բարձրահասակ, կարմիր այտերով, որ բռնված էր ծննդի երկունքով: Երբ ես երկար նայում էի այս երևույթին և հիացման մեջ էի, անկարծ կիտը երեք (գավակ) ծնեց. կատարյալ դյուցազուններ հասակով և բնությամբ: Առաջինն առյուծ հեծած՝ սլանում էր դեպի արևմուտք, երկրորդն ինձ հեծած դեպի հյուսիս էր դիմում, իսկ երրորդը վիթխարի վիշապ սանձած՝ արշավակի մեր տերության վրա էր հարձակվում»³⁵:

Երագի շարունակության մեջ, վիշապ հեծած հերոսը (Տիգրան) և Աժդահակ կը մենամարտին. Աժդահակ կը պարտվի. իսկ երագի արդյունքը իրականության մեջ կը կրկնվի:

Նորենացի կը վկայե, թե «Աժդահակ մեր լեզվով նշանակում է վիշապ»³⁶: Հարկ է ավելցնել, որ բառը իրանական է. գենտերեն կը նշանակե «վիշապ դահակ», իսկ պարսկերեն՝ ուղղակի «վիշապ»³⁷: Ազի Դահակա վիշապ մըն էր, որ պարսիկներու վրա տիրեց, մինչև որ Հրուդեն հաղթեց զինքը և բառտեց Դմբավենդ լեռան մեջ³⁸:

Նորենացի «մայր վիշապաց» կը կոչե Աժդահակի կինը՝ Անուշը³⁹, և իրենց զարմերը կ'անվանե «վիշապագուններ»⁴⁰: Պարսիկները «մարի» անունը կու տալին վիշապին⁴¹, ահա թե ինչու «վիշապ» և «մար» գուղորդումի ենթարկված հոլացքներ են⁴²:

Ուրեմն, առաջին հայացքով կարծես կը հաստատվի Սրվանձտյանցի վկայած դրոշակի վավերական հիմքը՝ Աժդահակի օձ ու վիշապ ըլլալը:

Սակայն կարելի՞ է ընդունիլ, որ պարտվածին խորհրդանիշը դարձած ըլլա հաղթողի ազգային դրոշակի կազմության հիմքը: Մեր կարծիքով, պատասխանը ժխտական է: Օրինակը բերենք Հրուդենի և Դահակի դրվագն: Երբ Դահակի անօրենությունները իրենց գագաթնակետին հասան, ապստամբություն մը պայթեցավ. Կավե դարբինը կաշիե գոնոց մը կապեց ցիցի մը ծայրը և իր հայրենակիցները առաջնորդեց: Հետո միացավ իրանյան բանակին⁴³:

Արդ, հետաքրքրականը այն է, որ ցիցին կապված գոգնոցը դրոշակ մըն է: Այդ դրոշակը

³³ Միջանկյալ նշենք, թե Նասատրյան յոթալիսանի վիշապը կը նկատե նաև Վան քաղաքի զինանշանը (Նշվ. աշխ., էջ 313): Հավելյալ տեղեկություններու չգոյությամբ՝ հարցը բաց կը ձգենք, բայց կը կասկածիք այս դիտողության ճշգրտության վրա:

³⁴ Գարեգին Սրվանձտյանց, Երկեր, հ. Ա., Եր., 1978, էջ 68—69:

³⁵ Նորենացի, էջ 134—135:

³⁶ Նույն տեղը, էջ 135:

³⁷ Նույն տեղը, էջ 336 (Թանօթագրություն ակադ. Ստ. Մայիսայանցի):

³⁸ Նույն տեղը, էջ 143: Պատմահայրը կը գրե Դմբավենդը:

³⁹ Նույն տեղը, էջ 139:

⁴⁰ Նույն տեղը:

⁴¹ Ա. Մարդկան, Տիրողուսին եւ Մովսես Նորենացին, Կիեննա, 1936, էջ 33:

⁴² Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. Ա., Եր., 1945, էջ 49:

⁴³ G. Oncken y F. Justi, Historia de la Parisa antigua, Buenos Aires, 1950, p. 69.

պատմականորեն վկայված է: Պարսից պետության դրոշակը եղած է մինչև 636 թվականը, երբ արաբները հափշտակած են զայն Ջատեջի ճակատամարտի ընթացքին⁴⁴, որ փաստորեն ուղեշրջած է Սասանյան կայսրության անկումին սկիզբը:

Ինչպես կը տեսնենք, այդ դրոշակը կազմված է հաղթողին խորհրդանշող՝ կաշեի գոգ-նոցը, գոր դարբինները աշխատանքի ատեն կը գործածեն:

Աստղամաքանական պիտի ըլլար, որ Տիգրանի պարագային հակառակը պատահեր: Պահ մը ենթադրենք, որ օձը և վիշապը կը խորհրդանշեն Աժդահակը՝ մեկ կողմէ, և Տիգրանի հեծած վիշապը՝ մյուս կողմէ: Ասիկա համոզիչ չէ. դրոշակ մը երբեք չի միախառնէր հաղթականին և հաղթվածին խորհրդանշները: Նմանօրինակ խառնուրդ կարելի է ընդունիլ միայն, երբ օրինակի համար, ձևական ստորադասության հարաբերություն մը գոյություն ունի. այս է պարագան Բրիտանական Հասարակապետության երկիրներուն:

Ասկէ գատ, ըստ Ռորենացիի, Տիգրան միայն երազի մեջ կը հեծնէ վիշապը:

Հակառակ Սրվանձոյանցի հարդորումեն բխող հետևության, մենք կ'ենթադրենք, որ Տիգրան Երվանդանի դրոշակը ազգային հիմքի վրա կերտված էր:

Հոս պետք է մեջբերել Հ. Ղևնդ Ալիշանի հույժ արժեքավոր դիտողությունը. «Հայք բռնավոր թագավոր մ'ունենին (Երվանդ, որո անուն օձ կամ վիշապ նշանակէ), գառ այլ կ'ըսեն բունեցին Ջաջ և ջջեցին՝ ի գետս և ի մոլայս»⁴⁵:

Հավանաբար, Ալիշան քաղած է Երվանդի վախճանին վկայությունը Գրիգոր Պարթևին վերաբերված «Հարցումեն» (այս բնագրի հեղինակին ինքնությունը տակավին վիճահարույց է). «Ասեն, քաջաց տեարք (տաճարք) են լերինս բարձունս և բնակութիւնք. և գԱղբասանդր կապեալ ունին ի Հոռմ և գԱրտավազդ ի Մասիս, և գԱռուանդ ի գետս և ի մոլայս»⁴⁶:

Ըստ Ռորենացիի, հայոց գահը բարձրացած են երկու Երվանդներ. Երվանդ Սակավակյաց՝ Տիգրան Երվանդյանի հայրը, և Երվանդ Վերջին՝ Սանատրուկի գահը բռնագրավող, Արտաշեսի զինվորներուն կողմէ սպանված: Կարելի չէ այս երկրորդ Երվանդին վերագրել ջրասույզ ըլլալու պարագան, որովհետև անոր մահվան հանգամանքները արդեն հայտնի են: Կը մնա առաջին Երվանդը:

Սսիկա այն Երվանդն է, որուն մասին ընդարձակորեն խոսած է Ջենտիլոն իր «Կյուրոպեդիային» մեջ, առանց անունը տալու⁴⁷, և որուն անունն ու մակդիրը կը հիշատակէ Ռորենացի⁴⁸: Ջենտիլոնեն գիտենք, որ այս թագավորը ազատատենչ անձ մըն է, որ ապստամբած է մարաց պետության դէմ և, կալանավոր, ցույց տված է իր անձնուրացությունը: Բայց ինչո՞ւ Ռորենացի կը լռէ այս քաջարի կեցվածքի մասին: Արդյոք այս վարքագիծը ավելի ևս չէ՞ր սլանձացնէր իր այնքան զովերգած Տիգրան Երվանդյանը:

Թեև Ջենտիլոնը աղբյուր չէ եղած Ռորենացիի պատմության, Երվանդ-Կյուրոս-Տիգրան ավանդությունը պատմական իրողություն մըն է, որ պետք է քահպանված ըլլար ազգային հողի վրա: Մենք կը կարծենք, որ Պատմահոր լռության աստճառը հարկ է փնտրել այն իրողության մեջ, որ Երվանդ իսկապես բռնակալ թագավոր մը եղած է. որ շուտով սպանվեցավ խեղճամահ ույալով սետի մը մեջ⁴⁹, թեևս բնական մահով: Տիգրան հաջորդեց զինքը: Բռնակալական այդ ուժը անբան գործէր էր, որ պիտի մթաւէր զավակին փառքը: Ահա թէ ինչո՞ւ Ռորենացի արհացած է իր անունը տալով ի միջի այլոց. հակառակ անոր, որ Երվանդ Վերջինի պառագային նշած է իր լավ ու վատ գործերը⁵⁰:

Երվանդի թագավորական կյանքին այս բացատրությունը կը մեռահաստատէ իր մակդիրին «կարծատն կյանք ունեցող» նշանակությունը: Համոզիչ չի թվիր «սակավապետ» իմաստին մեռարումը «ակավակեաց» բառին⁵¹, որ մակբերված է Ռորենագիի այն խոսքեն, թէ Տիգրան շատ ժուժկալ էր կերպիսումի մեջ: Ընդունելի չէ այս բացատրությունը. նախ որովհետև. ինչպես հայտնի է, Տիգրան Երվանդյանի ներբողականը հյուսած է ըստ «Պիտո-

⁴⁴ Ibidem: Տարբեր հարց, որ այդ ժամանակ դրոշակները կերպատ չէին: Մենք հոս օրո՞ղ ունինք ավանդության մը հետ:

⁴⁵ Հ. Ղևնդ Ալիշան, Հին հայտնք կամ հեթանոսական կոծնք հայոց. Վենետիկ, 1896, էջ 192—193:

⁴⁶ Լ. Ռաչիսյան, Գրիգոր Պարթևին վերագրված «Հանգումո» րոտես հայ մատենագրության եռախալրիք. Բանբեր Մատենադարանի, № 7 (1964), էջ 327:

⁴⁷ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Նշվ. աշխ., էջ 132—140:

⁴⁸ Ռորենագի, էջ 131:

⁴⁹ Թեևս Տիգրիսը, որուն հին անուններն են Արաւանդ էր (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ., Պետրոս, 1972, էջ 145):

⁵⁰ Ռորենագի, էջ 185—192:

⁵¹ Է. Պանիկյան, Հայաստանի մ. թ. ա. VII—VI դդ. պատմությունից, Լրաբեր հասարակական գիտությունների, № 11, 1974, էջ 83:

յից գիրքի» ավանդած ճարտասանական կանոններուն⁵², ուր Տիգրանի մարմնական չափավորությունը կաղապարված խոսք է մեր կարծիքով, հասարակաց՝ որևէ դրական հերոսի: Ապա, նույնիսկ եթե ընդունինք Տիգրանի չափավորությունը իբրև առանձնահատուկ արժանիք, այն ատեն պետք է Երվանդը նկատենք հացի փշուրներով ապրող ճգնավոր մը, որպեսզի արդարանար «սակաւակեաց» մակդիրը:

Միաժամանակ, դիտել տանք, թե Մասիւը փակված Արտավազըը նույնպես կոչված է «Սակաւակեաց»⁵³: Չմոռնանք, որ Արտավազը ևս, իր հոր մահէն ետք, Արաքսի Տափերական կամուրջէն անցած պահուն, խելագարության նոպա մը ունեցավ և իր ծիուն հետ միասին գործեցավ գետ, ուր և անհետացավ: Ասոր վրա Խորենացի կը բերէ Արտավազի Մասիս արգելափակման հանրահայտ դիցաւեպը (միջ): Գծելով զուգահեռ մը, կը տեսնենք, որ Երվանդ «Սակաւակեաց» խելդամահ կ'ըլլայ գետի մը մեջ (քաջքերու կողմէ հափշտակվելու պատմական բացատրություն), իսկ Արտավազը «Սակաւակեաց» խելդամահ կ'ըլլայ նաև գետի մը մեջ (դարձյալ քաջքերու կողմէ բանտարկվելու «պատմական» բացատրություն):

Ուրեմն, հիմնավորելով այիշանյան Երվանդին ինքնությունը, մեզի կը մնա անդրադառնալ անոտ անունին նշանակության:

Այիշան կ'ըսէ, թե Երվանդ անունը «օձ կամ Վիշապ նշանակէ»: Ժան-Պիեռ Մահե կը զուգորդէ երկու Երվանդներու մասին եղած տվյալները, և այդ համադրումով ցայտուն կը դառնա Երվանդի դիվական-վիշապային գիծը⁵⁴: Աստուղ Մնացականյան ուսումնասիրած է Տիգրան Երվանդյանի կերպարը և ընդգծած՝ անոր վիշապային գիծերը⁵⁵: Չմոռնանք Վահագնի (Տիգրանի որդի՝ ըստ Խորենացիի) ծանոթ հարաբերությունը վիշապներու հետ: Ընտանաբար, կրնանք խոսիլ վիշապային սերունդի մը մասին:

Վերադառնալով մեր հարցադրումին, կրնանք հաստատել, որ մեզ հետաքրքրող դրոշակը կը ներկայացնէր Երվանդունիներու տոհմական դրոշակը⁵⁶, որ չազգային որոշներու շարքին դասված էր և որ կազմված էր անոնց տոհմանշաններով՝ օձը և վիշապը:

Այդ տոհմանշանները հաստատված էին Երվանդ Սակավակայցի կողմէ («որոյ անունը օձ կամ Վիշապ հաւանաբար նշանակէ») և պահպանված՝ իր որդիին կողմէ, Աժդահակի հետ որևէ կապ չունենալով:

Իսկապես գոյություն ունեցա՞ծ է այս դրոշակը: Ինչպես ըսինք, հին մատենագրության մեջ մեր մասնակի պրպտումները ապարդյուն եղան այս ուղղությամբ: Սակայն տվյալները բավարար են հաստատելու համար այս «դրոշակին» վավերական հիմքերը:

ВАРДАН МАТЕВОСЯН (Буэнос-Айрес)—Древние армянские знамена.—Вопреки своей большой источниковедческой ценности армянская геральдика не удостоилась еще пристального внимания. На основе источниковедческих и археологических материалов автор представляет старинные армянские знамена с древнейших времен до воцарения династии Ервандидов.

⁵² Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 272—274:

⁵³ Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 42 (տե՛ս Ա. Մնացականյան, Ռիտորություններ «Վարդգես մանկան» վիպական հատվածի վերաբերյալ, Պատմա-բանասիրական հանդես, № 2, 1975, էջ 228):

⁵⁴ Jean-Pierre Mahé, Le erime, d'Artawazd et les kajk' ou le mythe du temps profané. Revue des Etudes Arménienne, NS, XVI (1982), p. 177

⁵⁵ Ա. Մնացականյան, «Ռափեան քերթութիւն որ լաղագս Տիգրանայ» երկը, Բանբեր Երևանի համալսարանի, № 1, 1973, էջ 64—81:

⁵⁶ Այս դրոշակը տևած է հավանաբար մինչև հելլենիստական մշակույթի թափանցումը Հայաստան, որովհետև կը տեսնենք, որ Կոմմագենեի թագավորները, որոնք Երվանդունիներեն կը սերբին, բոլորովին տարբեր զինանշան մը կը գործածեն: